



“ՓՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆԲ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍԻ ՓԱՆ.” ՂՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻԱ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ԱՊՐԻԼ 1, 1892

ԹԻԻ 4

ՋԱՏԻԿ

Չատիկի զուարթ տօնախմբութիւնը մօտեցած է: Աշխարհի մէջ տրուած լաւագոյն լուրը կը բաղկանայ սա երկու բառերէն, «Քրիստոս յարեալ»: Ուրախ ենք որ խօսուեցան այդ բառերը և որ մենք լսեցինք զանոնք: Յարուցեալ Փրկիչ մը կատարեալ Փրկիչ է: Յիսուս որ յողթեց մահուան և զերեզմանին, կարող է յողթել ամէն թշնամոյ: Ուրեմն մեզ համար չկայ վախնալու բան մը երկրիս վրայ կամ դժօրբքն մէջ եթէ նա է մեր Փրկիչը: Չեր Փրկիչն է նա Քրիստոսի այս պատկերը օրինակուած է մարմարին հռչակաւոր արձանէ մը որ կը դանտի եկեղեցւոյ մը մէջ ի Քոփէնհակ: Արձանին պատուանդանին վրայ գրուած են սա բառերը. «Եկէք ինձի, բոլոր յոգնած ու բեռնաւորածներ, և ես ձեզ պիտի հանգչեցընեմ»: Օրհնեալ հրաւեր: Այո, ով դու խաչեալ և յարուցեալ Տէր, զթած բարեկամ և եղբայր, մենք կու գանք և կ'ընդունինք հանգստութիւնը և խաղաղութիւնը զոր դու միայն կարող ես տալ:

Թորվալտէն, որ շինեց այդ արձանը, դարուս հռչակաւորագոյն արձանագործն էր: Դնաւ ծովու վրայ Իուլանտայի և Տանիմարքայի մէջտեղ 1770 ին, և մեռաւ ի Քոփէնհակ 1844 ին:

Տրոնցայմի մայր եկեղեցւոյն մէջ կը դանտի սոյն արձանին գածէ (աւել) մէկ օրինակը. այդ եկեղեցւոյն պատկերը դրինք անցեալ տարի: Չորրորդ երեսին վրայ կը տեսնէք սեան մը խոյակին պատկերը որ առնուած է յիշեալ հին եկեղեցիէն:



ՅՈՒՌՈՒ ԵՐԶԱՆԸ ԲՈՓԷՆԿԱԻ ԵԿԵՂԵՑՆԱՅ ՄԻՈՏԵ ՄԵՋ

ՓՐԿԱՆՈՒ

Կը կարգանք թէ Անդղիոյ ծովեզերաց վրայ ստիպուի նաւարեկութեան մը հանդիսատես բաւական թուով ան.

ձինք ժողով մը ընելով որոշած են մեծ պարզ և մը տալ ընտիր փրկանաւ մը հնարող անձին: Փրկանաւէն կը սպասուի չկորսուիլ փոթորկայոյզ ծովու

վրայ և կեանքեր ազատել նաւարե- կութենէ : Իրմէ պահանջուած յատկու- թիւնք են ծովուն երեսը մնալ, զերծ լինել ընկզմէն թէպէտ ծովուն ալիք- ները լինան իւր մէջ, զօրութիւն՝ այն- պէս որ չխորտակի այնպէս կատաղու- թենէն, ժայռերու զարնուելէ, կամ խորտակեալ նաւուն բաղխելէ, դիւ- րութիւն ուզուած կողմը դառնալու, կարողութիւն ուզուելու երբ տակը վրան կը դառնայ : Արդ, ամէն նորա- հասակ անձ դիտէ թէ կեանքը յա- ճախ կը նմանցուի ծովային ճանապար- հորդութեան, թէ բոլոր մարդիկ են ճանապարհորդք որ կը նաւարկեն մարդկային կենաց մեծ նաւով :

Կայ շատ հին Գիրք մը որ է վստահելի փրկանաւ բոլոր այնպիսեաց որ կ'ա- պաւինին անոր ապահով կանոնաց՝ զերծ լինելու համար նաւարեկութե- նէ ծովային այս վտանգաւոր ճանա- պարհորդութեան մէջ, ներկայ ժա- մանակիս միջոցին կամ դէպ ի յաւի- տենականութիւն : Ունի յատկու- թիւն ջրին երեսը պահելու զմարդ, կարողացունելու որ և իցէ անձ զերծ լինել ծովուն մէջ կորսուելէ երբ նա- լուն վրայ կը յարձակին և կը լեցունեն զայն կատաղի ալիքներ, կամ երբ մարդ- նաւ կը մտնէ այս անստոյգ ջուրերուն վրայ : Կու տայ ապահով կանոններ որք կը շնորհեն զօրութիւն՝ ազատուելու կորսուելէ փորձութեան այնպէս կատա- ղութենէն, մեղաց ժայռուտ ծովերը- ներէն, կամ արդէն նաւարեկեալ ուրիշ կեանքերու բաղխուելէ : Կ'ու- սուցանէ դիւրութիւն եւս դառնալու ցարդ սխալ առնուած քայլերէ և ըն- թացքներէ, և կը պարունակէ ամե- նէն պարզ կանոնները ուղղուելու երբ որ և իցէ չար ազդեցութեանց բըռ- նութենէն ներքի վրայ կ'ըլլանք կամ կ'ընկճինք : Իրօք հոգւոյն փրկանաւը իւր ազատարարի յատկութեամբը շատ նման է Ովկիանոսին փոթորկայոցը ա- լիքներէն ազատուելու համար շին- ուած փրկանաւին, միայն սա տարբե- րութեամբ որ առաջինը անշուշտ կը փրկէ զհոգին, մինչ երկրորդը, գի- տանք որ, երբեմն անյաշող կ'ելլէ փրկել մարմինը :



ԳԱՐՈՒՆ

Մենք շատ անգամ կը գեղեցկա- ցունենք մեր սենեակները կապերտ- ներով և գորգերով, բայց չկան գե- ղեցիկ կապերտներ նման այն կապեր- տին որ կը ծածկէ գաշտերը զարնան եղանակին մէջ : Այն բազմագոյն ծա-

ղիկք որ կը բացուին կանաչ խոտերուն մէջ, կը յօրինեն երկրիս համար պատ- մուճան մը աւելի շքեղ քան զոր Սողոմոն կարող էր հագնիլ իւր բոլոր փառաւորութեան մէջ : Եւ ի՞նչ հրա- պոյր կայ պարզ զարնանային օրուան մը բուսական և կենդանական կենաց մէջ, զոր վստահ եմ թէ մեր ընթեր- ցողք կը տեսնեն սոյն Ապրիլ ամսոյ մէջ : Հաճելի է ետևը թողուլ ձմեռ- ուան ստատկութիւնը և փոթորկաց սարսուռը : Բայց այս հաճոյքը միայն

հրաժարելու չափ մեծցած չէ՛ր : Կը խորհէր թէ այլ ևս ժամանակ էր և վա- յելուէ սկսիլ խօսիլ նման իւր աւելի մեծ մէկ ընկերին որ գօրէճէն նոր ընթա- ցաւարտ եղած՝ բարձր դիտողութիւն- ներ կ'ընէր ըսելով թէ իմաստութիւն է զննել իրերը և թէ ամէն ոք պար- տի որոշել իրեն համար, թէ սգիտու- թեան լուսով նկատելով՝ ի՞նչ բանե- րու արժան է հաւատալ, և ի՞նչ բա- ներ հարկ է մերժել : Եւս կ'ըսէր թէ կիրակնօրեայ դպրոցն օգտակար է



ՅԱՅԵՆ ՄԵՋ ԵԱՂԻՅ ԺՈՂՎՈՂ ԱՂԶԻՆ

կիսով չափ կը վայելեն այնպիսիք որ փակուած են քաղաքաց փողոցներուն մէջ : Հոս կայ փոքրիկ աղջիկ մը որ ուրախութեամբ ծաղիկ կը փողվէ դաշ- տին մէջ : Եւս վայրկեան մը կեցած է զննել թիթեռնիկները, և կ'ըսէ ինքնիրեն թէ ի՞նչ աղէկ կ'ըլլար եթէ փոքրիկ աղջկունք ևս ունենային թըռ- չելու այդպիսի թևեր :

ՁԳՈՅՑ

Պատանի մը կար իբր տասնևվեց տարեկան, որ կը խորհէր թէ արդեօք կիրակնօրեայ դպրոց երթալէ այլ ևս

մանկանց համար, բայց եկած էր ժա- մանակը երբ դժուար էր համաձայնե- ցունել գիտութեան և կրօնի վարդա- պետութիւններն իրարու հետ : Յետոյ յանկարծ ըրաւ հարցում մը որում տասնևվեց տարեկան այն պատանին կարող չեղաւ դիւրաւ պատասխանել այսինքն թէ ինչո՞ւ համար Սուրբ Գրոց սորվեցուցած և հինգած այս ինչ այն ինչ բաներուն կը հաւատար նա : Շատ չանցաւ պատանին ալ սկսաւ զարմա- նալ թէ ի՞նչ պարզմտութեամբ և ա- ռանց աւարկութեանց պատասխանել կարող լինելու կը հաւատար ինք Աստ-

ուածաշնչին մէջ պարունակուած բուրբ բաներուն :

Բայց առաւօտ մը լսեց որ բծիչին ըսած էր հովուին՝ թէ գիշերուան մէջ սաստիկ հիւանդացած էր գոլէճի այն ընթացաւարտը , թէ մարմնոյ մեծ տաղնապներու և մտաց սոսկալի ներդուրեանց մէջ կը գտնուէր : Կը խոստովանէր թէ խօսած էր յիմարի նման , իւր անհեթեթ գողափարներով մաքառած էր Ամենակալ Աստուծոյ խօսքերուն և վարդապետութեանց շէմ , և թէ բիւրաւոր անգամ կ'ամաչէր երևելու իւր նախատած Արարչին առջև : Այս երիտասարդն առողջացաւ , բայց գիտութեան վրայ իւր բարձր տեսութիւնները և անոր կրօնի հետ անհատարեալ :

րիչ : Բայց զգեալը մասնաւորապէս համբաււոր է քարի մը համար , որով հրաշագործ զօրութիւն կ'ընծայէ աւանդութիւնը : Ովոր , կ'ըսէ , կը համարէ այդ քարը , կարող կ'ըլլայ խօսիլ՝ լսողին շատ հաճելի բաներ : Կ'ըլլայ պերճախօս գովեստի և քաղաքավարական լեզուի մասին : Հազարաւոր ճանապարհորդք որ այդ աւանդութեան չհաւատարու չափ իմաստուն են , կը համարեն քարը : Եթէ որ քաղաքավարական շատ ձևեր կը գործածէ խօսքին մէջ , երբեմն կ'ըստի թէ նա համարած է Պլարնէի քարը , և ուրիշ բառը մտած է Անգլիերէն լեզուին մէջ : Ուէպոթըր այդ բառին նշանակութիւնը կը գնէ «սահուն» , խաբուսիկ խօսք :

Մարդն անվեհեր գնաց կանգնեցաւ հոն ինչպէս հրամայուեցաւ իրեն : Նա փողէն սեղանին վրայ գտնուող ատրճանակն առնելով քանի մը անգամ պարպեց անկիւնը շիտակ կանգնած այն կերպարանքին վրայ : Հազութէ խածուածի փոքրիկ նշան մը կ'երևէր դէպ այն մետաղեայ զրեատին , յղկեալ մակերեսն արձակուած գնտակներու այնքան հարուածներէն ետքը : Այնպէս աղէկ պատրաստուած էր գործը որ ոչ անոր մէկ յողուածը , ոչ խոռոչը և ոչ որ և իցէ մէկ տկար կէտը կը ցուցնէր զայն շինողին փոքր մէկ անհատարմութիւնն իսկ , և խորագէտ յաղթականը համոզուելով թէ այն արդարեւ էր վահան և զրահ , առատաձեռնութեամբ վարձատրեց մարդն իւր հանճարին և հաւատարմութեան համար :

Բայց ի՞նչ կը կարծէք թէ պիտի ըլլար մարդուն վիճակը եթէ մտածելով որ այդ զրահը պիտի գործածէր ուրիշ անձ մը և ոչ ինք , քիչ խնամ տանէր և թեթև զուլութիւն ընէր զայն պատրաստելուն մէջ , մտածութեան առարկայ ընելով միայն վարձը զոր կը յուսար ընդունիլ :



ՄՈՒԹՔԻ ԻՐԲԵՒ ՄԱՆԿԱՆ ԴԱՅՆԱԿ

Պավիերայի Ռոզէնհայմ քաղաքին մէջ մեծ յուզում կար 1882 Յունիսին , Կիրակի օր մը : Վիլհէլմ Ա. Կայսր ընկերակցութեամբ իշխան Պիզմարքի և Կոմս Մոլթքէի իջաւ Բայդէր Պատի պանդոկը :

Փողոցներուն մէջէն դէպի լուսազարդեալ պանդոկը վազող բազմութեան մէջ կը գտնուէր իբր քանակ մէկ տարեկան աղջիկ մը՝ չորս տարեկան տղայի մը ձեռքէն բռնած : Այս աղջիկն ալ կը փափաքէր տեսնել Կայսրը , բայց աւելի ևս կը բաղձար տեսնել հաշակաւոր զօրավորը որոյ փառաւոր հրամանատարութեան ներքե պատերազմած էին իւր եղբարց երկուքը : Ի զուր աստ և անդ փնտուեց ապահով տեղ մը ուր դնէր իւր փոքրիկ եղբայրը . դժուարութեամբ յառաջ կը շարժէր ճամբայ գտնելու համար այն ամբողջին մէջ : Պանդոկին մօտը , զոր շրջապատած էին ոստիկանութեան պաշտօնեայք , տեսաւ ծերունի մարդ մը : Ծփովեցաւ անոր համազգեստէն և կը խորհէր թէ ո՞վ էր արդեօք նա , ելեմտական պայտօնեայ թէ երկաթ ուղւոյ տեսուչ : Ըսաւ ինքն իրեն , «Տղան անոր կը յանձնեմ» և



ՔԱՆԱԿՈՒԹԻ ՀԻՆ ԱԵՏԱՐԱԿ ԹԻՒԱՆՆԱ

մաձայն լինելուն զրոյցները յաւիտեան անհետ եղան իւր շրթանց վրայէն : Պատանին կ'ըսէ այժմ թէ այսուհետեւ երբեք պիտի չհամարի ինքզինք մեծ՝ Կիրակնօրեայ դպրոցի համար , և խոստովանելով ինքզինք իբրև հետևող Աստուածաշնչին հին վարդապետութեանց , միայն կը յուսայ խոնարհաբար որ Սուրբ Գրոց մէջ յայտնուած Աստուածը և Փրկիչը ամբթ պիտի չհամարի ընդունել զինք :

ՊԼԱՐՆԷՒ ԴՂԵԱԿ

Այս զգեալը շատ հեռի չէ իւրանտայի քորք քաղաքէն : Պատկերին մէջ տեսնուած քառակուսի աշտարակն է միայն՝ նախնի բերդերէն մնացածը որ կառուցուեցան 400 տարի առաջ : Անոր մօտ կը գտնուին աղուոր անտառներ , և տեսարանն է յոյժ հրապու-

ՓՈՐՁՈՒԱԾ ԵՒ ԸՆՏԻՐ ԳՏՆՈՒԱԾ

Երբեք կարդացած էք այն զրահին վրայ զոր Նափոլէն Պոնափարթ ժամանակաւ յանձնարարեց շինել իւր անձնական գործածութեան համար : Չորահն այնպէս պիտի պատրաստուէր որ գնտակ չանցունէր , պատէր ամբողջ մարմինը , և զայն հագնողը ապահովապէս կարենար մտնել սաստկագոյն կուռոյ մէջ և անկէ դուրս ելլել առանց վնասուելու : Սահմանեալ ժամուն պողպատէ այն զգեստը բերուեցաւ Կայսեր առջև . զայն գողափարող և պատրաստող մարդը հպարտութեամբ իւր ձեռքն առած էր ցուցնելու համար :

«Հագիր» ըսաւ Նափոլէն : Մարդը քիչ մը տփուանեցաւ , բայց հնազանդեցաւ առանց վարանելու : «Կանգնէ հոն» , ըսաւ Նափոլէն զարձեալ , ցուցնելով արահին մէկ հեռաւոր անկիւնը :

խակոյն շնորհալի խոնարհութիւն մը ընելով ծերունոյն, ոսկե դքսակ մը դրաւ անոր ձեռքը և ըսաւ,

«Հայր, կը բարեհաճի՞ս քովդ առնուլ այս փոքրիկ տղան. ես կէս ժամէն պիտի գամ. կ'ուզեմ տեսնել այդ Մոլթֆէն»:

Երբունին մինչեւ կարող եղած չէր պատասխանել, սիրուն աղջիկը մեկնած էր անկէ: Փոքրիկ Ֆրանցէլ մեծապէս վախցաւ: Բայց յետոյ ծերունին իւր ժամացոյցը դնելով մանկան ականջին, խոստացաւ անոր անուշեղէններ, որով խաղաղեցաւ նա:

Նոյն միջոցին Ալպեանց գիւղերէն եղող այն աղջիկը բաղնութեան մէջէն իւր ճամբան բանալով կ'երթար յառաջ: Երբ հասաւ Պիզմարքի քով, խոնարհութիւն ըրաւ անոր և համբոյրներ զրկեց մեծարոյ իշխանին ձեռքին, բայց չէր երևեր կոմս Մոլթֆէ զոր կը սպասէր տեսնել: Յուսահատ եալ դէմքով նորէն դարձաւ իւր փոքրիկ եղբոր դայեակին քով և ըսաւ.

«Փառք Աստուծոյ որ հոս կը գրտնուիս իմ Ֆրանցէլիս հետ: Գիտցած ըլլաւ, հայր, որ լրագիրք կը ստեն: Անոնք ըսին թէ կոմս Մոլթֆէ պիտի գար, բայց հաս չեկաւ»:

«Գիտցած ըլլաւ, աղջիկ, որ լրագիրք չստեցին: Մոլթֆէ հոս է, քաղաքիս մէջ: Հարկաւ ժողովուրդը չճանչնար զնա, և այս է պատճառը որ չտեսնուիր նա»:

«Հոս է», ըսաւ աղջիկն հառաչելով, և շոյեղով Ֆրանցէլի թուի մազերուն գանգուրները, «ո՛հ, սիրելի, ես Ալպեանց գեղեցկագոյն վարդերը պիտի նուիրէի եթէ կարող լինէի տեսնել զորովորը»:

«Լաւ» ըսաւ ծերունին զուարթութեամբ, և իւր գրպանէն հանելով քարտ մը, դրեց անոր վրայ քանի մը բառեր, և յարեց, «Ահա, այս տոմսակով եկուր պանդոկ վաղն առաւօտ ժամ իննին: Ես կը վստահացունեմ զքեզ որ այս տոմսակով պիտի կրնաս ներկայանալ մարաջխտին: Բայց մի մոռնար Ալպեան վարդերը»:

«Իրա՞ւ կ'ըսես», ըսաւ աղջիկը: «Ես պիտի ջանամ գալ, բայց եթէ սուտ կը խօսիս ինձ, աչքերդ կը հանեմ յետոյ: Ահա արծաթ մը: Ատով գնէ գարեջուր, բայց, մտիկ ըրէ, չըլլայ որ գինովնաս: Մնաս բարով»:

Հաճոյական ժպիտով մը ծերունին զնայ այն տեղէն իւր ընդունած ճոխ նուէրով:

Յաջորդ առաւօտ աղջիկը ճիշդ ժամ իննին եկաւ կեցաւ պանդոկին դրան

առջև իւր ձեռքն ունենալով ժողկանց ահագին փունջ մը:

Դրան քով սպասող գլխաւորէմ զինուորական մը առաւ քարտը, և վէճ վա (աղջիկը) անոր ետեւէն վեր ելաւ սանդուղէն և մտաւ սրահը որոյ մօտ կը գտնուէր զորավարը:

Չինուորականը համառօտիւ ներսը լսուր տալէ ետքը դուռը բացուեցաւ, բայց նոյն վայրկեանին որ վէճ վա մտաւ ներս, ինկաւ իւր ձեռքի ծաղկէփունջը և ճչեց, «Սուրբ կոյս», վասն զի կը գտնուէր այն մարդուն առջև որոյ ինձամոյց յանձնած էր չար Ֆրանցէլը, և նա էր նոյն ինքն ընդհանուր հրամանատարը իւր ամբողջ համազգեստով և բազմաթիւ շքանշաններով:

«Մի՛թէ արժանի չե՞մ կախուելու»:



ՍԵԱՆ ԽՈՑԱՅ ՏՈՐՈՅԱՅՄԻ ՄԱՅՐ ԵՆԵՂՆԵՐՈՑ ՄԷՋ

ըսաւ վէճ վա երբ սթափեցաւ իւր առաջին երկիւղէն: «Տէր Զօրավար, իրօք ճշմարիտ է այս: Ո՛հ, ես չճանչցայ զձեզ»:

Մոլթֆէ ժպտեցաւ և իւր ձեռքն երկնցուց անոր:

«Մի՛ վախնար, աղջիկս», ըսաւ, «բան չկայ: Շնորհակալ եմ քու ծաղիկներուդ համար. և ես սա թալէրը կուտամ՝ քեզ: Ֆրանցէլ ասոր հետ խաղաց երէկ»:

Շնորհալի ժպիտով արձակուեցաւ վէճ վա: Այն թալէրն է տակաւին նուիրական նշան մը անոր ընտանեաց: կոմս Մոլթֆէ շատ անգամ հաճոյքով կը պատմէր թէ ինչպէս ինք չահած էր եօթմաստուն ֆէնիկիկ իբրև դայեակ մանկան:

ՄԱՆՈՒԿՆԵՐ ԶԻՆԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Չինաստանի մէջ հեծելանուով ճանապարհորդող անձ մը կը պատմէ հե-

տաքրքրական բաներ զորս տեսած է Չինական այնպիսի գաւառաց մէջ ուրոյ ճամբու վրայ չինարուն պատճառաւ ճանապարհորդք սովորաբար չեն ստացող զանոնք: Հետաքրքրական բաներէն մին էր շատ մը մանկանց ցիցերու կապուիլը դաշտին մէջ, ինչպէս կը կապուին այժերը կամ հորթերը: Խրաքանչիւր մանուկ անի գօտի մը իւր մէջըը. ետեի կողմէն այս գօտւոյն կապուած է իբր տասն սոք երկայն չուան մը որոյ միւս ծայրը հաստատուած է ցցի մը: Ցիցերն այնչափ հեռի կը կենան իրարմէ որ վասնզ չկայ չուաններուն իրար խառնուելուն մինչ մանուկները կը սողան դեանին վրայ կամ կը վազեն տատ և անդ: Անոնցմէ ոմանք կը քալին իրենց ոտից և ձեռաց վրայ, ոմանք իրենց առաջին ջանքերը կ'ընէին կանգներու հաւասարակուելով ցիցերուն դէմ, մինչ աւելի մեծերը կը վազէին կամ կը քալին խոտերուն մէջ: Ամէնքն ալ կը թուէին բարեբարոյ և երջանիկ. և թէպէտ կը դիտէին տարօրինակ օտարականը և անոր անխնայ զարմանքի արտայայտութեամբ, սակայն ոչ կուլային և ոչ կ'երևէր թէ երբեք կը վախնային: Կը թուէր թէ ոչ ոք ուշադրութիւն կ'ընէր այս մանուկներուն, բայց որովհետև անոնց մայրերը կը առնուէին որ կ'աշխատէին քիչ մը հեռին բրնձի արտի մը մէջ, անոնք հարկաւ կու գային մանկանց քով երբ հարկը պահանջէր: Այս մանուկները կը վախեցնէին առաւ ամբողջ ոչ և արևուրջս, և թերևս այնչափ հանգիստ էին որչափ տան մէջ աւելի փայփայուած մանուկներ:

ՃՇՄԱՐԻՏ ԿԸ ԽՕՍԻ՞

«Չեմ կարծեր որ կարող ըլլաք շատ յաջողիլ, շատ չար է», ըսաւ հայր մը դպրոցի մը տնօրէնին որում բերած էր իւր որդին իբրև աշակերտ»:

«Ճճմարիտ կը խօսի», հարցուց անօրէնը: «Կրնամ միշտ վստահիլ իւր խօսքերուն»:

«Այո», ըսաւ հայրը, «նա երբեք սուտ չխօսիր, ճճմարտութիւնը կը խօսի մինչև անգամ թէպէտ իրեն դէմ ըլլայ, դուք կրնաք վստահիլ իրեն այդ մասին»:

«Ուրեմն կրնանք յաջողիլ», ըսաւ տնօրէնը, «նա պիտի ըլլայ աղին մարդ մը»: Եւ եղաւ իրօք»:

Ամերիկայի Միտիոմարց ըրկեր... Ստորին... ՊԱՐՆԸՄ... ԿՈՍՏԱՆԴՆՈՒԳՈՒԼԸ... Ի ՏՊԱՐԱՆԻ